«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 1

07 փետրվարի 2014 թվականի

Համալսարանի 2013 թվականի գիտահետազոտական գործունեության արդյունքների և 2014 թվականի խնդիրների մասին

Լսելով և քննարկելով **«Համալսարանի 2013 թվականի գիտահետազոտական գործունեության արդյունքների և 2014 թվականի խնդիրների մասին»** հարցը (զեկուցող՝ գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Գ.Ի.Վարդանյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է՝ 2013 թվականի գիտահետազոտական աշխատանքի պլանավորված ծավալը, ընդհանուր առմամբ, կատարված է, առաջադրված խնդիրները լուծված են:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՊՏՀ-ում շարունակվել է ամբիոնային 54 թեմաներով գիտահետազոտական աշխատանքների իրականացումը, ավարտին են հասցվել ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի 3 դրամաշնորհային, 13 ներհամալսարանական գիտական դրամաշնորհային թեմաներ, սկսվել է «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունը. երեք ծրագրերի շրջանակներում իրականացվել են հետազոտություններ 15 գիտական ուղղություններով:

Կենտրոնում իրականացվող հետազոտություններում 2013 թ. ընդգրկված է եղել մոտ 90 հետազոտող՝ դասախոսներ, ասպիրանտներ, մագիստրանտներ, պետական կառավարման մարմինների աշխատակիցներ, մասնավոր հատվածի փորձառու մասնագետներ:

Ներհամալսարանական դրամաշնորհային թեմաներին մասնակցել է 70 հետազոտող՝ դասախոսներ, ասպիրանտներ և ուսանողներ:

Ընդհանուր առմամբ, ներհամալսարանական դրամաշնորհային թեմաներում և «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գիտահետազոտական ուղղություններում ներգրավված է եղել բուհի պրոֆեսորադասախոսական կազմի շուրջ 20%-ը:

2013 թվականին իրականացված հետազոտությունների արդյունքների հիման վրա հրատարակվել են 1 դասագիրք, 14 ուսումնական ձեռնարկ, 4 մենագրություն, 7 գիրք, 9 դասախոսության տեքստ, 550 գիտական հոդված, 39 ուսումնամեթոդական աշխատանք, 1 բառարան: Հոդվածներից 62-ը լույս է տեսել արտասահմանյան պարբերականներում:

Հետազոտական աշխատանքի արդյունքում պաշտպանվել են 34 թեկնածուական և 1 դոկտորական ատենախոսություններ:

Գիտական ամսագրերում 2013 թ., 2011 թ. համեմատությամբ, 1,5 անգամ ավելացել է ՀՊՏՀ աշխատակիցների, ասպիրանտների ու մագիստրանտների հրապարակումների թիվը: Միևնույն ժամանակ, 1,7 անգամ ավելացել է հրապարակումների քանակն արտասահմանյան ամսագրերում: Դրանց 53,5%-ը բաժին է ընկնում 7 ամբիոնի (մակրոէկոնոմիկայի՝ 13%, միկրոէկոնոմիկայի և

ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման՝ 9%, բանկային գործի և ապահովագրության՝ 7,2%, մարքեթինգի՝ 6,7%, միջազգային տնտեսական հարաբերությունների՝ 6,2%, ֆինանսների՝ 5,8%, կառավարման՝ 5,6%, բնօգտագործման տնտեսագիտության՝ 5,4%):

2013 թ. հուլիսի 6-8-ը Աղվերանում տեղի ունեցած «Զարգացում» ներհամալսարանական գիտաժողովը համանման միջոցառումների շարքում նորարարություն էր: Նպատակն էր «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ուսումնասիրությունների, ներհամալսարանական գիտական դրամաշնորհների և ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի բյուջետային ֆինանսավորմամբ թեմաների շրջանակներում հայեցակարգային մոտեցումների, կատարված հետազոտությունների նախնական արդյունքների ներկայացումը:

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆինանսական աջակցությամբ 2013 թ. հոկտեմբերի 23-25-ը անցկացվեց համալսարանի 23-րդ գիտական նստաշրջանը՝ **«Տնտեսական զարգացման քաղաքականության արդի հիմնախնդիրները ՀՀ-ում»** խորագրով: Լիագումար նիստին «ՀՀ գիտության ոլորտի զարգացման միտումները և խնդիրները» զեկուցումով հանդես եկավ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Հարությունյանը:

Գիտաժողովի աշխատանքները կազմակերպվեցին «Գործարար միջավայր և ներդրումային քաղաքականություն» «Ֆինանսական շուկաներ և հարկային քաղաքականություն», «ՀՀ տնտեսական զարգացումը և տնտեսական անվտանգությունը. խնդիրներ և հեռանկարներ», «Միջազգային տնտեսական համագործակցություն» խորագրերով՝ համապատասխան բաժանմունքներում, ներկայացվեց 140-ից ավելի զեկուցում:

Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել և անցկացվել են 30-ից ավելի գիտական սեմինարներ ու քննարկումներ՝ նվիրված երկրի ֆինանսական կայունության, սոցիալ-տնտեսական և այլ հրատապ հիմնախնդիրների:

Շարունակվել է հետազոտական համագործակցությունը ՀՀ կենտրոնական բանկի հետ: Համալսարանի ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի քննարկմանն են ներկայացվել «ՀՀ տնտեսության փաստացի զարգացումները և մակրոտնտեսական կանխատեսումները միջնաժամկետ հատվածում» (2013 թ. ապրիլ 10) և «ՀՀ ֆինանսական կայունության հաշվետվությունը» (2013 թ. նոյեմբեր 27) վերտառությամբ զեկուցումները, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի վերլուծությունների ու հետազոտությունների մասին լայնածավալ տեղեկատվություն:

Համալսարանի աշխատակիցները 2013 թվականին մասնակցել են Գերմանիայում, Մալայզիայում, Թաիլանդում, Հունգարիայում, Չինաստանում, Ռուսաստանի Դաշնությունում, Ուկրաինայում, Վրաստանում անցկացված գիտաժողովներին:

Նույն ժամանակահատվածում 450 ուսանող ներգրավվել է գիտական աշխատանքում՝ մասնակցելով համալսարանական, հանրապետական և միջազգային գիտաժողովների, սեմինարների, մրցույթների, ներկայացնելով 170-ից ավելի զեկուցում:

Ապրիլի 26-28-ը ՀՊՏՀ ուսանողական խորհրդի և Հայաստանի երիտասարդական հիմնադրամի նախաձեռնությամբ կազմակերպված «ՀՀ տնտեսության

զարգացման մարտահրավերներն ու խոչընդոտները» և մայիսի 31-ից հունիսի 2-ը ՈՒԳԸ «ՀՀ տնտեսության զարգացման հիմնախնդիրները» խորագրերով երկու ուսանողական գիտաժողովներ են տեղի ունեցել Ծաղկաձորում:

Համալսարանում շարունակվում են ուսանողներին գիտական աշխատանքում ներգրավելու ուղղությամբ կատարվող քայլերը: 2013 թվականն առանձնանում է նաև նրանով, որ առաջին անգամ, ֆինանսական հիմունքներով, ուսանողներ մասնակցեցին ներհամալսարանական դրամաշնորհային և «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտություններին:

Թեպետ հաշվետու տարում գիտահետազոտական գործունեության բնագավառում արձանագրված ձեռքբերումներին, դեռևս առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնցից են.

- երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման գործընթացներին համալսարանի ներուժի ոչ համարժեք մասնակցությունը,
- տնտեսության մասնավոր հատվածի հետ համագործակցության և գիտական հետազոտությունների արդյունքների առևտրայնացման բացակայությունը,
- ֆինանսական հիմունքներով հետազոտություններում ասպիրանտների և ուսանողների ոչ բավարար ներգրավումը,
- տնտեսագիտական մտքի նվաճումների հիման վրա ստեղծված մենագրությունների, դասագրքերի և ուսումնական ձեռնարկների սակավաթիվ լինելը,
- արտասահմանյան առաջատար պարբերականներում գիտական հրապարակումների փոքրաթիվ լինելը,
- իմպակտ-գործոնով միջազգային ամսագրերում հրապարակումների գրեթե բացակայությունը,
- հեղինակավոր միջազգային համաժողովներին համալսարանի գիտնականների, ասպիրանտների և ուսանողների մասնակցության ցածր մակարդակը,
- գիտական համագործակցության շրջանակներում տեղական և արտասահմանյան առաջատար գիտնականների հետ ստեղծագործական թույլ կապերը,
- արտասահմանի առաջատար գիտական կենտրոններում ստաժավորման հազվադեպ լինելը,
- ըստ ամբիոնների՝ գիտական հրապարակումների անհամաչափ բաշխվածությունը,
- գիտաժողովներին, գիտական սեմինարներին և այլ քննարկումներին ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի մասնակցության ոչ բավարար մակարդակը,
- հետազոտությունների ֆինանսավորման աղբյուրների բազմազանեցված չլինելը:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. **Հավանություն տալ ՀՊՏՀ գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Գ.Վարդանյանի հաշվետվությանը և բուհում 2013 թվականի գիտահետազոտական գործունեությունը գնահատել բավարար:**

2. **2014 թ. որպես ռազմավարական նպատակ սահմանել գիտական հետազոտությունների որակի բարձրացման խնդիրը՝ հիմք ընդունելով.**
   - մասնավոր հատվածի հետ տևական համագործակցության պայմանագրերով հետազոտությունների իրականացումը,
   - բարձր իմպակտ-գործոնով միջազգային ամսագրերում հրապարակումների պատրաստումը,
   - հեղինակավոր համաժողովներին համալսարանի գիտնականների, ասպիրանտների և ուսանողների մասնակցությունը,
   - գիտական համագործակցության շրջանակներում տեղական և արտասահմանյան առաջատար գիտնականների հետ ստեղծագործական կապերի հաստատումը,
   - արտասահմանի առաջատար գիտական կենտրոններում ստաժավորման համակարգի զարգացումը:

3. **Ռեկտորատին՝**
   - քննարկել «պրոֆեսոր-հետազոտող» («դոցենտ-հետազոտող») կատեգորիայի ներմուծման հնարավորությունը, ինչը ենթադրում է պրոֆեսորի (դոցենտի) ուսումնական բեռնվածության կրճատում՝ գիտական աշխատանքի միաժամանակյա մեծացմամբ,
   - քննարկել ՈՒԳԸ ստորաբաժանումների գիտական ղեկավարների նյութական խրախուսման և ուսումնական բեռնվածության մեջ այդ գործառույթը ներառելու հնարավորությունը:

4. **Ամբիոններին, ֆակուլտետներին, «Ամբերդ» հետազոտական կենտրոնին՝**
   - ապահովել ֆինանսական հիմունքներով գիտական հետազոտություններում դասախոսների, ասպիրանտների և ուսանողների ներգրավվածության բարձր աստիճան,
   - հետազոտական ուղղություններ և թեմաներ որոշելիս ապահովել դրանց համապատասխանությունը գիտության զարգացման գերակա ուղղություններին և երկրի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներին,
   - ապահովել գիտական հետազոտությունների գործնական ուղղվածությունը և դրանց արդյունքների ներդրումը պետական և մասնավոր հատվածներում, համալսարանի կրթական գործընթացներում և ուսումնամեթոդական նյութերում,
   - ապահովել գիտական հետազոտությունների արդյունքների պատշաճ հրապարակումը,
   - ապահովել Վեբ օֆ Սայնսի (Web of Science), Գուգլ Սքոլարի (Google Scholar) և Սկոպուսի (SCOPUS) գիտական հրատարակչություններում համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի գիտական աշխատանքների հրատարակումը (յուրաքանչյուր ամբիոնի հիմնական հաստիքային 5 աշխատողի հաշվով՝ առնվազն 1 հրատարակում),
   - նպաստել միջազգային համաժողովներին համալսարանի դասախոսների, գիտաշխատողների, ասպիրանտների և ուսանողների մասնակցությանը:

5. **ՈՒԳԸ նախագահ Վ.Գ.Գևորգյանին**՝ բարձրացնել ՈՒԳԸ աշխատանքներին ուսանողների մասնակցության աստիճանը, լավագույններին երաշխավորել՝ ֆինանսական հիմունքներով հետազոտություններում ընդգրկելու համար:

6. **Ամբիոններին, ֆակուլտետներին**՝ համակողմանիորեն աջակցել կրթական բոլոր մակարդակներում և ձևերում ուսանողների մասնակցությանը գիտական հետազոտություններին, ապահովել ուսանողական գիտական ընկերության ստորաբաժանումների գիտական ղեկավարների աշխատանքի արդյունավետությունը:

7. Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր **Գ.Ի.Վարդանյանին** և «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրեն **Ս.Ս.Ավետիսյանին**՝
   - մինչև 01.03.2014 թ. ներկայացնել «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գիտական հետազոտությունների ուղղությունների ցանկը,
   - մինչև 01.03.2014 թ. ներկայացնել առաջարկություն, ըստ գիտական հետազոտությունների ուղղությունների, 2014 թ. բյուջեով գիտության համար նախատեսված միջոցների բաշխման վերաբերյալ,
   - ներկայացնել առաջարկություն ուղղությունների գիտական ղեկավարներ նշանակելու և հետազոտական խմբերում ընդգրկվող դասախոսների, ասպիրանտների և ուսանողների մասին, 2014 թ. մարտին ազդարարել հետազոտությունների մեկնարկն ըստ ուղղությունների,
   - ապահովել 2013 թ. կատարված հետազոտությունների արդյունքների հրապարակումը մինչև 2014 թ. ապրիլի 30-ը,
   - զարգացնել համագործակցությունը պետական և մասնավոր հատվածների հետ,
   - ստեղծել տվյալների և աշխարհի առաջավոր հետազոտական կենտրոնների ուսումնասիրությունների արդյունքների շտեմարաններ՝ ՀՊՏՀ հետազոտողներին տեղեկատվական աջակցության նպատակով,
   - ապահովել կենտրոնի հետազոտությունների արդյունքների հրապարակումների տարածումը շահառուների շրջանում:

8. Գիտության բաժնի պետ **Խ.Ա.Մխիթարյանին**՝
   - մինչև 2014 թ. մարտի 31-ը ներկայացնել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2012-2017 թթ. գիտահետազոտական և նորաստեղծական գործունեության զարգացման հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ցանկը,
   - ձեռնարկել միջոցառումներ պետական բյուջեից ֆինանսավորման և արտասահմանյան դրամաշնորհների ստացման ուղղությամբ,
   - մշակել և ներկայացնել առաջարկություն ֆինանսական հիմունքներով հետազոտություններ կատարելու նպատակով գիտաուսումնական խմբեր ձևավորելու մասին,

- գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտորին ներկայացնել առաջարկություն խմբերի ղեկավարների և խմբերում ընդգրկվող ասպիրանտների ու մագիստրանտների առնչությամբ,
- մշակել և գիտական խորհրդի քննարկմանը ներկայացնել պրոֆեսորադասախոսական կազմի հեղինակած դասագրքերը, ուսումնական ձեռնարկները և մենագրությունները համալսարանի միջոցներով տպագրելու կարգը:

9. Գիտահետազոտական գործունեության ուղղությամբ ձեռք բերված դրական արդյունքների ամրապնդման և առկա թերությունների վերացման, բնագավառի հետագա զարգացման, համալսարանի գիտական ներուժի մեծացման նպատակով 2014 թ. հունիսին գիտական խորհրդի նիստում քննարկել «Բարձր որակավորմամբ կադրերի պատրաստման ուղղությամբ ամբիոնների աշխատանքի արդյունավետությունը» հարցը (պատասխանատու՝ **Գ.Ի.Վարդանյան**):

10. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Գ.Ի.Վարդանյանին:

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

07.02.2014 թ.
ք. Երևան

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 2

7 փետրվարի 2014 թվականի

Ուսումնական բեռնվածության ժամերի բաշխման վերաբերյալ

Լսելով և քննարկելով **«Ուսումնական բեռնվածության ժամերի բաշխման վերաբերյալ»** հարցը (զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Պ.Ա.Քալանթարյան)՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. **Ուսումնական տարվա հաստիքային բեռնվածության բաշխումն ավարտել օգոստոսի վերջին.**

   ա) հեռակա ուսուցման ընդունելության արդյունքով ձևավորված (հաշվարկված) կուրսերի ուսումնական բեռնվածությունը բաշխել ժամավճարով,

   բ) ուսումնական տարվա ընթացքում, հիմնական բեռնվածությունը բաշխելուց հետո, նոր հոսքերի կամ խմբերի ձևավորման հետևանքով առաջացող ժամերը բաշխել ժամավճարով:

2. **Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր Պ.Ա.Քալանթարյանին:**

3. **Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:**

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

07.02.2014 թ.
ք. Երևան

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 3

07 փետրվարի 2014 թվականի

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի 2012 թվականի մայիսի 31-ի N 11 նիստի որոշմամբ հաստատված «Ներհամալսարանական գիտական դրամաշնորհների տրամադրման կարգում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Լսելով և քննարկելով **«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի 2012 թվականի մայիսի 31-ի N 11 նիստի որոշմամբ հաստատված «Ներհամալսարանական գիտական դրամաշնորհների տրամադրման կարգում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»** հարցը (զեկուցող՝ գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Գ.Ի.Վարդանյան)՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. **«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի 2012 թվականի մայիսի 31-ի N 11 նիստի որոշմամբ հաստատված «Ներհամալսարանական գիտական դրամաշնորհների տրամադրման կարգում» կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.**
   1) կարգի 2-րդ բաժնի՝
   ա. 2.3-րդ կետում «ուղղությունների» բառը փոխարինել «հայտերի» բառով,
   բ. 2.3-րդ կետը «ե» ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ «զ» ենթակետով.
   «զ) գիտահետազոտական նախագծի[1] կատարման համար գիտաուսումնական խումբ[2] ստեղծելու հայտ:»,
   գ. «զ» ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հղումներով.
   «[1] Գիտահետազոտական նախագիծը մեկ կամ մի քանի ուղղությունների շրջանակներում գիտական և ուսումնական բնույթի հետազոտական աշխատանքի համալիր է՝ կրթական գործընթացում հետագա ներդրման նպատակով:
   [2] Գիտաուսումնական խումբը ուսանողներից, ասպիրանտներից, երիտասարդ դասախոսներից կամ գիտաշխատողներից կազմված կատարողների կոլեկտիվ է, որը ղեկավարում է գիտությունների դոկտորի կամ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող դասախոսը կամ գիտաշխատողը (համալսարանի հիմնական հաստիքային աշխատող): Առանձին դեպքերում գիտաուսումնական խումբը կարող է ստեղծվել ռեկտորի հրամանով՝ առանց մրցույթ հայտարարելու:»,
   2) կարգի N 5 հավելվածի 1.2-րդ կետում «մրցութային հանձնաժողովը» բառերը փոխարինել «գիտության բաժինը» բառերով:
2. **Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Գ.Ի.Վարդանյանին:**
3. **Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:**

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

07.02.2014 թ.
ք. Երևան

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2014 թվականի փետրվարի 7-ի նիստի N 4 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **«Բանկային գործ»** մասնագիտացման բակալավրիատի ամփոփիչ ատեստավորման քննությունների առարկայական ցանկը հաստատելու մասին հարցը:

Զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Պ.Ա.Քալանթարյան:**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Պրոֆեսորներ Կ.Լ.Աթոյանը, Լ.Հ.Բաղանյանը, Ա.Լ.Ասլանյանը, Ա.Բ.Սալնազարյանը, Մ.Ն.Հարությունյանը, Ա.Ա.Թավադյանը, դոցենտ Լ.Ն.Մեհրաբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել **«Բանկային գործ»** մասնագիտացման բակալավրիատի ամփոփիչ ատեստավորման քննությունների առարկայական ցանկը՝ համաձայն աղյուսակի.

Մասնագիտացում	Ամփոփիչ ատեստավորման քննությունների առարկայական ցանկը	
	Պարտադիր	Ավարտական աշխատանք չգրող ուսանողների համար
Բանկային գործ	**Բանկային գործ**	**Բանկային ռիսկերի կառավարում**

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

Գիտական խորհրդի քարտուղար **Ն. Հ. Դարբինյան**

07.02.2014 թ.
ք. Երևան